ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տպիչների, պատճենահանող սարքերի վերանորոգման և քարթրիջների լիցքավորման ու վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի մարտի 28-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/01-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2025 թվականի օգոստոսի 5-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 18.04.2025թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

28.03.2025թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԻՉՆԵՐԻ, ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/01-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «05» «08» 2025թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Լևոն Ղազարյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 28.03.2025թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-25/01-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով սահմանված 1-ին չափաբաժնի մասով 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամի չափով և 2-րդ չափաբաժնի մասով 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը.

1.1. Պայմանագրի 18.04.2025թ. կնքված N 1 համաձայնագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 1-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 18.04.2025թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Լևոն Ղազարյան
Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ, Վրեժ Իսրայելյան փող. տուն 77
ՀՎՀՀ՝ 54696665
Հ/Հ՝ 220579675319000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Լ. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1
« 05 » « 08 » 2025թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 1
« 18 » « 04 » 2025թ. կնքված N 1 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	50311120/501	համակարգչային սարքերի պահպանման-վերանորոգման ծառայություններ				1900000	1900000	1900000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4000000	4 000 000
2	50311120/502	համակարգչային սարքերի պահպանման-վերանորոգման ծառայություններ							500000	500000	500000	500000	500000	500000	500 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Լևոն Ղազարյան
Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ,
Վրեժ Իսրայելյան փող. տուն 77
ՀՎՀՀ՝ 54696665
Հ/Հ՝ 220579675319000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Լ. Ղազարյան

(ստորագրություն)

Կ.Տ